

Թիւ 24746  
Փետրուար 6, 1976

Արժանորդ

Տ. Արտէն Ա. Քհսյ. Աշմեան  
Հովհան Ս. Մեսրոպ Հայք. Եկեղեցւոյ  
Նախագահ ծխական Խորհուրդի  
Ռէյսին.

Սիրելի Տէր Արտէն,

Ստացած ենք Ցունուար 29, 1976 թուակիր 2եր աեղեկազիրը, որով կը  
հաղորդէք թէ 2եր Նախագահութեամբ Ցունուար 25ին գումարուած համայնքին  
ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի երեք անդամոց ընտ-  
րութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը ինդրէք  
ընտրուած անձերու վաւերացման պաշտօնազիրը:

Նկատի ունենալով որ 2եր ծխական ժողովը աեղի ունեցած է Թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ծխա-  
կան Խորհուրդի նորընակիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեմատ փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորընակիր  
Դիւանի անդամոց անունները:

Օր հսելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքին մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

ճան Եսայեան  
Միւռոն Զորտեկիան  
Սուրատ Ճինկօղեան